ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2020թ. թիվ 16-Ա

ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 14.10.2019թ. նիստի թիվ 1 արձանագրությունը և հաշվի առնելով Ռ.Մարտիրոսյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ուսումնական հաստատությունում մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ռաֆիկ Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ռ.Մարտիրոսյանին՝

10-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 13
ք.Վանաձոր